

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՅԼԱԴՈՒՆԻՔ ^{*)}

14. Վկայասերն ամեն տեղէ առատ պաշար հաւաքեց իւր վկայարանութեանց հաւաքածոյին, Սգիպտոսէ քաղեց ևս կրօնաւորաց կանոնները, և այնտեղի գաղթական Հայոց հոմար եպիսկոպոս ձեռնադրեց և թողուց իւր քեռորդին, Ծովքի իշխանին որդին, Գրիգորը, և այնպէս դարձաւ իւր տեղը 1072-ին, երկու կամ երեք տարւոյ բացակայութենէն յետոյ: Գէորգ՝ որ խաբէութեամբ պաշտօն էր ստանձնիր, օրինաւորապէս չվարեց զայն. ուստի և Վկայասերն դառնալուն պէս չընկէց զՏէր Գէորգ յաթոռոյ հայրապետութեանն առեալ զքօղն ի գլխոյ նորա» (Ուռհ. եր. 247), Գէորգ առանձնացաւ ի Տարսոն և անդ մեռաւ քիչ ետքը: Այս Գէորգ Լօռեցին է, որ Գէորգ Գ. անուամբ կաթողիկոսաց շարքին մէջ սկսած է դրուիլ, որպէս զի վերջին Կոստանդնուպոլսեցի Գէորգ կաթողիկոսին Գէորգ Դ ստորագրութիւնը արդարանայ, թէ ոչ պարզ փոխանորդէ աւելի չէր, թէպէտ օծեալ, և կաթողիկոսական գաւազանին մէջ մտնելու ալ իրաւունք չկրնար ունենալ: Իսկ Վկայասերն առանձնացաւ ի Մադաուսուն (հաւանաբար Սեառ լերանց վրայ): Այս միջոցին պէտք է դնել Վկայասերին այցելութիւնն յԱնի, ուր եպիսկոպոս ձեռնադրեց միւս այլ քեռորդին, Վասակեան Բարսեղը, լիազոյն արտօնութեամբ կառավարելու այս կողմերու հաւատացեալները, թէպէտ կաթողիկոսական անունը տուած չէ, զոր յետոյ ուրեմն ստանձնեց Բարսեղ, հաւանութեամբ իւր քեռուն, և եղև արթուն և ժիր հովիւ մը, և նորա վրայ վստահանալով կրցաւ Վկայասերը դառնալ իւր առանձնութեան, Սեառ լերան վանքերը, ուր սկսած էր իւր եկեղեցական կենաց առաջին քայլերը:

15. Բագրատունեաց անկմանէն յետոյ, Փոքր Հայոց և Կիլիկեաց և Սփրատացաց լեռնային երկիրներուն մէջ ապաւինող հայ իշխանաց գլխաւորն կարող է սեպուիլ Փիլարտոս Վարաժնունի, որ զօրացեր էր Սփրատացաց կողմերը, որև կաթողիկոսին

*) Լուսմայ 1905 № 4.

նորորդի և Անտիոքայ դուքսին Վասակին սպանութենէն յետոյ, Անտիոքի ալ իշխեց 1076-ին և նոր հայ իշխանութիւն մը կանգնելու դադափարը կազմեց: Դժբաղդաբար Փիլարտոս շատ սև գոյներով կը նկարագրուի պատմիչներէն. «Անդրանիկ որդի սատանայի» կը կոչէ զնա Ուռհայեցին, «վասն զի էր անհաւատ քրիստոնեայ, ոչ հայ դիտելով զնա և ոչ հոռոմ» (Եր. 247 և 248): Այդ նախատանաց արժանի դատուած է Փիլարտոս ոչ իւր ներքին նպատակին համար, այլ իւր գործերուն համար, զի ամեն անիրաւութիւն կը գործէր համարձակ, և խարդախութիւն և նենգութիւն և անգթութիւն չկայր, որ զինքն կասեցնէր: Իւր կենաց վերջին օրերը քրիստոնէութիւնն ալ ուրանալը, կը ծանրացնէ իւր դատաստանը: Փիլարտոս իւր նպատակին համար կուղէր ընդ իւրև նուաճել ուրիշ իշխանները: Ասոնց մէջ նշանաւոր էր Թոռնիկ Մամիկոնեան տէր Սասնոյ, զոր ի հպատակութիւն հրաւիրեց, և Վկայասէրն ալ ստիպեց որ Թոռնիկը համոզէ, քանի որ նա իւր փեսայն էր: Թոռնիկ ընդդիմացաւ, պատերազմի մէջ ալ յաղթեց. Ամրքաբար Տուծիկ իշխանին ձեռք լարուած որոգայթէն ալ ազատեցաւ, այլ դարանակալ զինուորէ մը սպանուեցաւ: Այնուհետ բերդին մօտ, և գլուխը Փիլարտոսի բերուեցաւ, որ Թոռնիկի գլխոյն սկաւսուակէն զինիի գաւաթ կազմեց և կը գործածէր: Թոռնիկի որդիներն են Չորտուանէյ և Վասակ իշխանները, և ինչպէս վերև յիշեցինք, Մամիկոնեանց տունը մարած չէր նոր Պահլաւունեաց ժամանակ:

16. Փիլարտոս իւր առաւել յաջողութեան համար խորհեցաւ կաթողիկոսութիւնն ալ իւր հովանաւորութեան ներքև առնուլ, ուստի ստիպեց Վկայասէրը դալ և իւր մօտ բնակիլ: Կրկին էին Վկայասէրից զգացած դժուարութիւնները. թէ առանձնութիւնը թողով աշխարհի ժխորին խառնուիլ, և թէ Փիլարտոսի նման մէկումը ձեռք իյնալ, ուստի լաւագոյն սեպեց բնաւ իսկ կաթողիկոսութենէ հրաժարիլ: Կաթողիկոսական թեկնածուն էր Սարգիս քեռորդի Պետրոս Իետադարձի, որ Խաչիկ կաթողիկոսի եղբայր չկուրիւր, և ուրիշ քրոջ մը որդի լինել կը կարծուի: Փիլարտոս թագաւորական իշխանութիւն բանեցնելով օծել տուաւ զՍարգիս ժողովով եպիսկոպոսաց 1076 ին, և Վկայասէրը յօժաւութեամբ զրկեց անոր, «գըօղն և զգաւազանն և զսուրբ նշանն Տէր Պետրոսի» (Ուռհ. 253), և Սարգիս հաստատուեցաւ ի Հոնի քաղաք Ջահուն (այժմ Ալպսթան) գաւառի, երբ տակաւին կենդանի էր Դէորդ Լոռեցին Տարսոնի մէջ քաշուած: Վկայասէրը դարձեալ զինքն կաթողիկոսութեան ծանր բեռէն թեթեւած հարծելով երկըրդ ճանպորդութեան սկսաւ ի Կոստանդնուպոլիս,

և անտի նորէն անցաւ Նգիպահոս: Անւոյ և բոլոր իսկ արևելեան կողմանց Հայերուն գլխաւոր կը ճանչցուէր յայնժամ Կիւրիկէ Բագրատունի, որդի Անհողին Դաւթի, Թագաւոր Աղուանից: Սոքա չուզեցին Վկայասէրին մեկնելէն յետոյ հայրապետական աթոռին տէր ճանչնալ Հոնիի Սարգիսը, ուստի զնոյն ինքն Բարսեղ Պահլաւանի արքեպիսկոպոս Անւոյ և քեռորդի Վկայասէրին և անկէ կաթողիկոսական փոխանորդ նշանակուած, ուզեցին կաթողիկոս հռչակել, և օծումն էլ կատարել տուին Աղուանից Յովսէփ կաթողիկոսին և եպիսկոպոսաց ժողովոյն ձեռամբ Հաղբատու վանքին մէջ 1081-ին: Այդ որոշման կամակից գտնուեցաւ և Մանուէլ Թոռն Փաղլունայ, որ այն ժամանակին Անւոյ տէրն էր. ուր և հաստատեց Բարսեղ իւր հայրապետական աթոռը: Դիւրին է մը տածել թէ Վկայասէրը ոչ միայն չդժկամակեցաւ այդ գործին, այլ և յօժարակամ հաւանեցաւ և հաստատեց Բարսեղի իշխանու թիւնը, և այս պատճառաւ շատեր 1081 թուականին կ'սկսեն Բարսեղի կաթողիկոսութիւնը և կը վերջացնեն Վկայասէրի իշխանութիւնը, այլ ևս բոլորովին հրաժարեալ համարելով զնա: Սակայն յետոյ պարագայք պիտի ցուցնեն թէ Վկայասէրն տակաւին բոլոր ազգէն իւր գլխաւոր հայրապետը կը ճանչցուէր: Այդ միջոցին Վկայասէր կը գտնուէր յնգիպտոս, Սարգիս կը նստէր ի Հոնի, Բարսեղ յԱնի, և Դէորդ պաշտօնէ՛ զրկեալ այլ ոչ յուսահատեալ տակաւին կենդանի էր ի Տարսոն: Կիրակոս կ' աւելցնէ. «Աւ միւս տմն ի Վասպուրականի ի կղզւոջն Աղթամարայ» (Էր. 57: Սյո յիշատակութիւնը որ կանուխ է քան զապստամբութիւն Թոռնիկեան Դաւիթի, կը հաստատէ Աղթամարայ կաթողիկոսաց այն կարծիքը, թէ 1113 տարուոյ Դաւթի յայտարարութենէն առաջ ալ, Արծրունեաց Թագաւորութեան ժամանակէն սկսելով, Աղթամարայ աթոռակալը կաթողիկոսական պատիւ և իրաւունք կը վայելէին: Չեմք կրնար անգամ մըն ալ չիշխել, որ եթէ Վկայասէրը տէր լինէր իւր իշխանութեան այն կարողութեամբ և այն ազդեցութեամբ զոր կը վայելէր, թոյլ չէր տար կաթողիկոսական իշխանութեան պառակտման. և դուռ չէր բանար օծեալ տեղակալաց կոմ աթոռակից կաթողիկոսաց դրութեան և անկէ ծագած անտեղութեանց, թէպէտ իւր օրով դարձեալ յաջողեցաւ զայն դարմանել:

17. Բարսեղի օծման թուականը կը համեմատի Ռուբէնի զօրանալուն ի Բարձրբերդ, այլ մեք քաղաքական դիպուածները քաղելու նպատակ չունիմք: Ռուբէնի մեծնալը կապ ունի Փիլարատոսի իյնալուն հետ, և Փիլարատոսի անունն ալ կապուած է կաթողիկոսական խնդրոյն հետ: Սարգիս, որ նորա կամքով կա-

Թողիկոս օծուած էր ի Հոնի, տարի մի միայն կրցաւ պաշտօնաւարել և 1077-ին մեռաւ, Փիլարտոսի հրամանով նորա տեղ օծուեցաւ Թէոդորոս եպիսկոպոս ղրան կաթողիկոսարանին ի Հոնի, «Մեծ երաժիշտ ձայնաւորաց», Ալախօսիկ մականուանեալ իբր «Ալէլու խօսող»: Թէոդորոս պաշտօնավարեց ի Հոնի ութ տարի մինչև 1085, մինչև որ քաղաքը ինկաւ Պոլտաճի անուն ամիրային ձեռքը, և Թէոդորոս չկրցաւ փոխադրուիլ ի Մարաշ, ուր էր Փիլարտոսի իշխանութեան կեդրոնը, և Փիլարտոս որ իւր հովանաւորութեան ներքև կաթողիկոս մը ունենալը, ազգային իշխանաց գլուխ լինելուն պայման կը կարծէր, նոր կաթողիկոս մը նստեցուց ի Մարաշ. որ եղաւ Պօղոս վանահայրն Վարազայ: Սա կը ներկայացուի իբր «այր սուրբ և առաքինի» (Ուռհ. 275), և այդ կը հաստատուի կամովին պաշտօնը լքանելէն, երբ ահաւ որ Դրիգորէ, Բարսեղէ և Թէոդորոսէ հոքը չորրորդ մը կը լինի ինքը և չունի իրեն հետ ազգին մեծամասնութիւնը: Պօղոս մեռաւ վեց տարի յետոյ 1091-ին յՈւռհա, և պատմիչներէն ոմանք տակաւին կաթողիկոս անուամբ կը յիշեն զնա, թէպէտ յայտնի է թէ նա կամովին հրաժարած էր անտի, և Փիլարտոս ալ, որ նորա միակ պաշտպանն էր, արդէն կորուսած էր իւր իշխանութիւնը, իւր իսկ իշխաններուն դաւաճանութեամբ, և ի վերջին յուսահատութեան մահմեդական հաւատքը ընդունած էր, 1087-ին ի Պարսկաստան:

18 Իսկ Բարսեղ կը մնայր յիւր աթոռն յԱնի և կը յանձնաձէր հայրենական երկրին մէջ մնացեալ հօտը: պահելով միշտ Վկայասէրին պատիւը, որ իւր մօրեղբայրն և բարերարն էր միւսնգամայն: Բարսեղ ազգային ցաւերուն դարման ընդունելու դիտմամբ անձամբ զնաց առ Մելիքչահ արքայ Պարսից 1090-ին, որոյ բարեմոյն և բարեբարոյ ընթացքին գովաբան են ամեն պատմիչներ հաժապնութեամբ: Բարսեղ առատ նուէրներով ներս կայացաւ, բաղդ և իւր լանդրուածները առատօրէն ընդունեցաւ. որք էին կրօնական պաշտամանց ազատութիւն, եկեղեցեաց և վանօրէից ապահարկութիւն, եկեղեցականաց ազատ պաշտօնավարութիւն և ապահարկութիւն, և այլ ուրիշ դիւրութիւններ, և իրեն պաշտօնին ալ անարգել տարածում բոլոր Մելիքչահի տէրութեան մէջ: Որք Բարսեղ դարձաւ, կային «և արք փառաւորք ի սուլտանէն զհետ իւր» (Ուռհ. 290), ի հարկէ արքունի հրամաններուն գործադրութեան հսկելու համար: Այդ իշխանութեամբ Բարսեղի առաջին գործերէն մին եղաւ գալ ի Հոնի, ուր Թէոդորոս Ալախօսիկ տակաւին իբր կաթողիկոս կը ճոխանայր, զայն Աթուէն ղրկեց, Գետադարձի քօղն ու գաւազանն ու սորբը նշանն ալ

յետս առաւ, զորս Վկայասէրն յանձնած էր Սարգիսիւ Պօղոսի նկատմամբ բան մը ընելու պէտք չունեցաւ, զի նա կամովին քաշուած էր, և քիչ յետոյ կամ նոյն ժամանակին մեռաւ 1091-ին, և այսպէս ճեղհ միահեծան սուրբ աթոռն պատրիարքութեան» (Վարդ. 107. Ուռհ. 291): Գէորգ Լօռեցիին պէտք էր կանուխ մեռած լինէր, իսկ Գրիգոր Վկայասէրի վրայ չխօսուիլ, թէպէտ կենդանի էր նա յառանձնութեան Սեառ լեռին: Իսկ Ադթամարայ անունը չյիշուիլ զի կ'երևի թէ հեռաւոր գաւառաց մէջ փակեալ, ինքն ուրիշի չէր խառնուէր, և ուրիշներ չէին կրնար իրեն խառնուիլ: Բարսեղ հովուական պտոյտ մը կատարեց ի Հոնի, ի Կեսարիա, յԱնտիոք, յԱռհա և այլուր, ամեն կողմն մխիթարութիւն և ուրախութիւն հասցնելով հաւատացելոց, և նորէն դարձաւ Անի 1092-ին: Միւս անգամ կրտսնէնք զԲարսեղ յԱռհայ իբր 11 տարի յետոյ 1103-ին, երբ ամենայն ինչ այլափոխեալ էր և Խաչակիրք կը տիրէին քաղաքին. և Պաղգին լատին կոմս Նիքսիոյ մեծ պատուով և պարգևներով մեծաբեց հայրապետը: Այդ տարիներու մէջ աւելի մանրամասնութիւններ չունիմք Բարսեղի գործունէութեան վրայ:

19. Վկայասէրը թողուցինք 1076 թուականէն յորում Սարգիս հաստատուեցաւ ի Հոնի, և ինքն մեկնեցաւ երկրորդ անգամ ի Կոստանդնուպոլիս: Այլ ևս կը կորուսանեմք նորա գործունէութեան թելը, և չեմք կարող որոշել թէ երբ դարձաւ իւր տեղը, և երբ դարձեալ ելաւ արտասահման երթալ: Կ'երևի թէ Գրիգոր ամեն բան քեռորդոյն Բարսեղի խնամոց յանձնելով զինքն ազատ կը սեպէր որևէ պատասխանատուութենէ, և իբր սոսկական ոմն ազատօրէն կ'երթեկէր, բոլոր իւր աշխատութիւնը նուիրելով վկայաբանութեանց թարգմանութեան, աւերուեալն ճառերու և մեկնութեանց: Այլ ազգն բոլորովին համամիտ չէր իրեն, զի զնա ինքն կը նկատէին յիւր քեռորդին, և սքեպ Գրիգորի և Բարսեղի անունները ի միասին կը յիշատակուին իբր ժամանակին կաթողիկոս: Ինչ ինչ խնդրոց մէջ, երբ աւելի ծանրակշիռ լինէր գործը, ուղղակի իրեն կը դիմէին իբր գերագոյն հայրապետի, ինչպէս եղաւ երկրորդ ճշուակաւիին առթիւ, որ հանդիպեցաւ 1102-ին: Ուռհայեցիին յառաջակցեցին Վկայասէրին շրջաբերականը, զոր կը մակագրէինա Յէլուսաւորչի սուրբ աթոռոյս» (Ուռհ. 355): Որովհետև վկայասէրին սովորական դադարն էր Սեառ լեռան վանօրէից մէջ, ի կեդրոնի գաղթականութեան Փոքուն Հայոց և Կիլիկիոյ, Կոմաքենայ և Ասորոց, մարթ է մեզ ըսել թէ երբ Բարսեղ յա՛նուն Գրիգորի կը հովուէր ներքին գաւառները, արտաքին գաւառք աւելի ուղիղ յարաբերութիւն ունէին նոյն ինքն Գրիգորի

հետ, երբ սա յուղևորութեան չէր: Ուղևորութեանց թիւն ու շըրջանը չեմք կարող ճշտել. երկու անգամը յիշեցինք, գուցէ ուրիշներ ալ կան. արդէն ևրուսադէմին խաչակիրներէն առնուելու միջոցին 1099 ին, Վկայասէրը քաղաքին մէջ կը գտնուի, և մահմեդականներէն սպանուելու երկիւղ կըկրէ (Ուռհ. 326), ի հարկէ Խաչակրաց յայտնի համակրութիւն յայտնելուն համար:

20. Այդ պէտք է լինի Վկայասէրին վերջին ուղևորութիւնը, զի արդէն ծերացած և յոգնած ալ պէտք էր լինէր: Այնուհետև առանձնացաւ նա ի Կարմիր Վանք մօտ ի Քէսուն, ուր կ'իշխէր Գող Վաս'լ հայ իշխանը, և երբ զգաց իւր մահուան մօտիլը լուր յղեց առ կաթողիկոսն Բարսեղ, որ Ուռհայի 1103 տարւոյ այցելութենէն յետոյ նորէն դարձեր էր յԱնի. «Եթէ հասեալ է ժամանակ իմ, ինչ յուղարկեմ գիս առ Տէր» (Վարդ. 113): Բարսեղ հասաւ մահուանէ քիչ յառաջ, ճանապարհին աւազակաց նեղութիւն ալ կրելով: Վկայասէրի գլխաւոր յանձնարարութիւնն եղաւ իւր երկուց քեռթոռանց հողը, որք էին Գրիգոր և Ներսէս, մին 14 և միւսը 8 հարեկան տղայք, որդիք Ասիւրատայ իշխանին Մովսէս, յորոց առաջինն արդէն սկսեր էր իւր մօտ պահել, իսկ երկրորդն ալ նմին ընկերակից և եկեղեցական կոյման ժառանգ սահմանած էր: Վկայասէրն ուղեց նաև որ մանուկն Գրիգոր կաթողիկոսութեան կոյուի ժամանակին, և ծերունի հայրապետին այդ բաղձանքը իբրև հրաման ընդունուեցաւ և իբրև օրէնք յարգուեցաւ Բարսեղի մահուանէ ետքը: Յանձնարարեց նաև իւր մեծ գործոյն, վկայաբանութեանց հաւաքածոյին, կամ հին անունով Տօնամակին աւարտումը, յորում արդէն գլխաւոր գործակից ունէր Թաբգմանի մականուանեալ Վիրակոս վարդապետը, որուն յանձնուեցաւ իսկ գործոյն լրումը: Վկայասէրը վախճանեցաւ սրբութեամբ «յառաջին շաբաթն ամարան աղուհացիցն, յաւուր շաբաթու» (Ուռհ. 372), կամ «յաւուր շաբաթու ի յիսնական ամարան, ի տօնի Նրեմիայի մարգարէի» (Վարդ. 114), որ միևնոյն օրը կը ցուցնեն ըստ հնագոյն տօնացուցի. այսինքն է Նղիական պահոց շաբաթ օրը, որ 1105 տարին յունիս 3-ին հանդիպած է մեր տոմարին կանոնաւոր հաշուով:

21. Վկայասէրին վրայ ինչ ինչ ակնարկներ ըրինք արդէն, բայց բանի մը խօսք ալ աւելցնենք նորա կերպարանը ճշտելու համար: Անձնական ձիրքերով նշանաւորագոյն կերպարաններէն մին է, կատարեալ ուսումնական իւր ժամանակին համեմատ և քաղաքական գործք վարժ իւր ցեղին և պաշտօնին բերմամբ, երկու ձիրքերն ալ ենթարկեց հոգևորական կենաց սիրոյն, որ իւր յատկանիշը դարձաւ: Սիրեց ճգնաւորական տոնանքութիւնը, այլ

ի նմին նախադասեց ուսումնական և գրական գրադուռները, քան պարզ աղօթկիրութիւնը: Ազգային գրականութիւնը Թ. և Ժ. դարերուն մէջ տակաւ անկման ձև մը առած էր, Վկայասէրը հետեւելով իւր հօր շաւղին ջանաց պայն վերականգնել, և ԺԱ. դարուն յաջող շարժումը՝ արտադրեց ԺԲ. դարուն գովելի մատենագիրները որք մեր գրականութեան արծաթի դարը կը կազմեն, և որոց հայր կրնայ կոչուիլ Վկայասէրը: Ազգային ներքին զարգացման և բարօրութեան համար ալ անտարբեր չեղաւ Գրիգոր, զի իւր անունն իսկ բաւական եղաւ բառնալ մեր եկեղեցիէն նորօրինակ տաղնապ մը, որ էր կաթողիկոսական ընտրութեան արգելքը, զոր Բիւզանդեան հնարագիտութիւնն մտածած էր չայ եկեղեցւոյ դէմ: Այսու հանդերձ հայրապետական աթոռոյն աչքը չունեցաւ Գրիգոր, և ներեց իսկ որ աթոռը պառակտի ժամանակ մը: Բայց կը խոստովանիմք թէ հին գրութեան կործանումէն յետոյ, և նոր գրութեան մը ստեղծուելէն յառաջ, այնպիսի անորոշ ժամանակ մը կըտիրէր, որ Գրիգոր առանց մարգարէական հոգւոյ չէր կրնար գուշակել թէ որն պիտի յաջողէր: Ազգային նոր կեդրոնի կազմութեան համար տարբեր կերպերով կ'աշխատէին Փոքրհայեցի գաղթականք ի Մամհաւ, Սփրատացի գաղթականք ի Մարաշ, և հայրենեաց հողին վրայ մնացողներ յԱնի. երեքն ալ կաթողիկոսութեան իշխանութիւնը իրենց նեցուկ համարելով զայն իրենց հետ կ'ուզէին, Գրիգոր ներեց որ Գէորգ օծուի ի Մամհաւ, Սարգիս ի Հոնի և Բարսեղ յԱնի. բայց միանգամայն չկորոյս իւր գերագոյն ազդեցութիւնը, և պարագայ մը որ կրնար չարաչար պառակտմանց տանել, իւր իսկ ժամանակ լուծուեցաւ յաջողութեամբ, և եթէ կրցաւ իւր մահուան պահուն կաթողիկոսական աթոռը միահեծան և ազդեցիկ վիճակի մէջ թողուլ Բարսեղի, պէտք է ճանաչեմք ի նմին ոչ միայն Բարսեղի գործունէութիւնը, այլ Գրիգորի խոհականութիւնը: Այդ պարագայն կը մեղմացնէ Վկայասէրին թափառական շրջագայութեանց վրայ մեղադրանքը, զոր Շնորհալին ալ կը յայտնէ. «Ժառանգութիւն ոչ ստացեալ, Ոչ ի միտմ վայրի բնակեալ, Պանդխտաբար յերկրի չըջեալ, Զբաղեցեալ հոգիսըն կերակրեալ» (Վեց. տող 1850): Վերջին պարագայն կ'ականարկէ Վկայասէրին գաղթական հայերը մը խիթարելուն, նոցա յատուկ հովիւներ կարգելուն, և նոցա վիճակը կարգադրելուն և ապահովելուն:

22. Գրիգորի կեանքին կարևոր պարագաներէն մին ալ նորա շարունակեալ յարաբերութեան սէրն է օտար եկեղեցեաց հետ, մանաւանդ կարծեցեալ ուղևորութիւնն ի Հռովմ, փաստ մի է հռովմէականաց ձեռք թէ Վկայասէրն ազգային եկեղեցւոյն դը-

բուժիչներ խախտելով հռովմէական դաւանութիւնը ընդունած է: Սակայն բողոքովին օտար է Վկայասէրէն միութեան խնդրոյն հետամտութիւնը: Ստոյգ է որ դէպ յարեմուտոս նայուածքները իւր յաջորդաց համար միութեան խնդրոյն յանգեցան, սակայն և ոչ մի պարագայ չեմք գտներ, յորում Վկայասէրն կամ միութիւն խնդրած կամ միութեան համար բանակցած լինի: Իարձեալ նորա անխտիր ամեն աթոռոց դիմելը, մինչ ալն աթոռներ իրարու հետ հաշտ չէին, կը ցուցնէ թէ և ոչ միոյն յարմարելու մետք չունէր, և միայն անոնցմէ կուզէր քաղել նախնի ժամանակաց պատուական մնացորդները, մանաւանդ սրբոց վկայաբանութիւնները, զորս թէ ի Յունաց և յԱսորոց առնելով կը հայացնէր: Ի Հռովմ գացած լինելը ինչպէս յիշեցինք մտացածին է բողոքովին, շատեր զայն չեն յիշիր, Շնորհալին և ոչ իսկ կ'ակնարկէ, ի յունէ և յասորոյն փոխանցելը կը պատմէ, ի լատինէ բան չյիշեր: Ոմանց Հռոմովն է որ նորերու համար Հռոմ եղած է, գուցէ երբ Կիրակոսի հարագատ օրինակը լաւ քննուին, նորա խօսքերն ալ ուղղուին, և դրչագրի սխալ մը եղած լինելը հաստատուի: Նոյն իսկ Գրիգորի Հռովմայ հայրապետին առ Գրիգոր Սիւննադայ արքեպիսկոպոս նամակը, որ այնչափ կը կրկնուի, աւելի Վկայասէրին Հռովմ չերթալը կը հաստատէ, եթէ և նամակը Վկայասէրին գրուած լինէր, որ չհաստատուիր: Վկայասէրին ամեն կողմ հայ գաղթականութիւնները Հայ եկեղեցւոյ տեսակէտէն զօրացնելը, Հայ եկեղեցւոյ դաւանութիւնը ամրացնելը, անոնց սեփական հովիւներ ձեռնադրելը, փաստեր են հաստատելու թէ Վկայասէր ջանացած է իւր եկեղեցւոյն զաւակները օտար եկեղեցիներու յարաբերութիւններէն հեռու պահել:

ՔՆՆԱՍԷՐ